<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
ուրբաթ, 31 մարտի 2023թ., 14:05

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
12 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Հրահատ Արզումանյան
Արտեմ Կոնստանդյան
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտ

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Օվսաննա Առաքելյան
Գուրգեն Ղուկասյան
Դավիթ Պետրոսյան
Արթուր Ապերյան
Սերգեյ Քոչարյան

Հրավիրվածներ
ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ Մարիամ Ժամկոչյան
Ներքին աուդիտի տնօրեն Արթուր Ղուկասով

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բաղոյանը:

Աննա Բաղոյանը ներկայացրեց, որ 31.03.2023թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 14.03.2023թ. դրությամբ:

Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 15.03.2023թ-ին: Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 31.03.2023թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 31.03.2023թ-ին:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր մասնակիցներին: Նշեց, որ օրակարգում է Բանկի Խորհրդի անդամ Արտեմ Կոնստանդյանի լիազորություններն իր դիմումի համաձայն վաղաժամկետ դադարեցնելու և Յունիբանկի սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման ձևը սահմանելու հարցերը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ Բանկի Խորհրդի որոշմամբ առաջարկվում է վաղաժամկետ դադարեցնել Խորհրդի անդամ Արտեմ Կոնստանդյանի լիազորություններն իր դիմումի համաձայն: Արտեմ Կոնստանդյանը Խորհրդի անդամի լիազորությունները ստանձնել էր 20.06.2018թ. Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ:
Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանը անձամբ իր անունից և Վարչության ու Յունիբանկի թիմի անունից շնորհակալություն հայտնեց Արտեմ Կոնստանդյանին արգասաբեր աշխատանքի համար՝ հույս հայտնելով, որ փոխգործակցությունը հետագայում կշարունակվի:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը երախտագիտության խոսքեր հայտնեց Արտեմ Կոնստանդյանին երկարամյա համատեղ արդյունավետ աշխատանքի համար, նշեց, որ Բանկի Խորհուրդը բարձր է գնահատում Արտեմ Կոնստանդյանի մարդկային հատկանիշները և ուրախ է շարունակել համագործակցությունը վերջինիս հետ՝ որպես բարձր պրոֆեսիոնալ ղեկավար բանկային և ֆինանսական շուկաների ոլորտում:

Խորհրդի անդամ **Վարդան Աթայանը** միացավ հնչեցված երախտիքի խոսքերին:
Իր կողմից **Արտեմ Կոնստանդյանը** շնորհակալություն հայտնեց Յունիբանկի ղեկավարությանը և թիմին երկարամյա աշխատանքի համար:

Շարունակելով, **Մեսրոպ Հակոբյանը** ներկայացրեց, որ, հաշվի առնելով <Յունիբանկ> ԲԲԸ արժեթղթերի նկատմամբ պահանջարկը, Բանկի Խորհուրդը որոշում է կայացրել իրականացնել թվով 15.000.000 հատ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով, 300 ՀՀ դրամ շուկայական արժեքով: Տեղաբաշխումն առաջարկվում է իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով:

Մեսրոպ Հակոբյանը խոսքը փոխանցեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանին՝ ներկայացնելու քվեարկության արդյունքները:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172.886.525 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 169.222.539 բաժնետոմս, կամ

տոկոսային հարաբերությամբ 97.88%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

1. **<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ Արտեմ Կոնստանդյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը:**

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի 1-ին հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 169.197.056 ձայն կամ մասնակիցների ձայների 99.98%
դեմ՝ 20.000 ձայն կամ մասնակիցների ձայների 0.01%
ձեռնպահ՝ 5483 ձայն կամ մասնակիցների ձայների 0.003%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշում ընդունեց վաղաժամկետ դադարեցնել <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ Արտեմ Կոնստանդյանի լիազորություններն իր դիմումի համաձայն:

2. **<Յունիբանկ> ԲԲԸ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխման ձևը սահմանելու հարցը:**

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի 2-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 169.222.539 ձայն կամ մասնակիցների ձայների 100%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 0 ձայն
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշում ընդունեց <Յունիբանկ> ԲԲԸ թվով 15.000.000 հատ սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման տեղաբաշխումն իրականացնել բաց բաժանորդագրության միջոցով:

Աննա Բաղոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և ավարտեց Բաժնետերերի ժողովը ժամը 14:15-ին:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բաղոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 31 մարտի 2023թ.